կար, մինչև բարկանալ զայմախամին՝ կնքեաց զեկեղեցին, և այնու ևս ոչ եղև հնար զի տային, այլ միայր փակ եկեղեցին։ Տեսեալ զայն պատրիարքին՝ բանալ ետ զեկեղեցին, պայման եդեալ ընդ նոսա. և յեկեղեցին ոչ եթող զերիցունս, և յԱստուածածնէ և յայլ եկեղեցոյ իրիցունս առաքեաց անդ մինչև և զայն հատուցին։

Իսկ յորժամ նոտաւ յաթոռ՝ վարէ զհայրապետութիւն իւր ըստ հաճոյից Աստուծոյ։ Եւ էր ԺԱ. ամաց ժամանակ որ ի խանգարմանէ աշխարհականաց բազում վատթարութիւնս երևէր ի մեծահանդէս քաղաքն։ Ի կարճոյ համառօտեսցուք. Նախ որ գրկեալք էին զմիմեանս՝ իրաւունս արար նոցա, և որք արեամբ չափ ոխս պահէին՝ հաշտեցոյց, և որք ծառայք կալեալ չնային՝ թողուլ ետ և կարգել հրամայեաց։ Եւ ոմն գերի վարեալ ի Ծռանկք և կինն ատ այլ ոմն առեալ, և եկեալ առաջի այրն յաւուրսն յայնոսիկ՝ բողոք բառնայր, և յետինն չտայր, և յերկարէր դատաստանն՝ մինչև գնացին ի զատին ևս։ Եւ նա ասէ. Պատրիկն ձեր ո՞րպէս ասաց, և ասեն՝ Առաջի առն հրամայեաց. և զատին բերեալ գիրք և ասէ. Եւ ես հրամայեցի զի թէ Հ ամ շրջիլ թէ լիցի՝ առաջի կինն է իւրն։ Եւ կրկին եկին առ վարդապետն, և ի ձեռն խոստովանահօրն ապաշխարանս եդ նմա և այլ կին ետ։ Եւ որքան դատաստան լինէր՝ պատրիարքին հրամայէր և զատին, վասն որոյ և ոչ երթային առ նա. և գային յամենայն կողմանց ի դատ ի բազում ամաց, և տեսանէր զամենայն անլինչ և անդրամ. և զօրինազանցսն բնաւ արգիլէր որ իբր զխոզ ի տիզմն հայէին։ Եւ գրէր նախ առ վեց եկեղեցին վասն հաշտութեան և խաղաղութեան և սիրոյ և ասէր. Թէ զպատուէրս իմ պահեցէք՝ լիցուք մեք ընդ ձեզ ի սէր որպէս հայր յորդիս.